ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԳՐԻԳՈՐԻՍ» ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋ

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

0916.01.5 «ԴԵՂԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ

0916.01.01.5 «ԴԵՂԱԳՈՐԾ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ

# ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

## (ՄԱՍՆԱԳԻՐ ԵՎ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ/ՄՈԴՈՒԼԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ)

Հաստատում եմ

«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի

Տնօրեն՝ Ի. Վարդանյան

«02» 09 2021թ.

ԵՐԵՎԱՆ 2021

| «ԴԵՂԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ» | |
|---|---|
| **1. Ծրագրի անվանումը՝** | «Դեղագործություն» |
| **2. ՈԱՇ-ի մակարդակ՝** | Որակավորումների ազգային շրջանակի 5-րդ մակարդակ |
| **2.1 Կրթական ծրագիրը՝** | Միջին մասնագիտական |
| **2.2 Որակավորում՝** | Մասնագետ |
| **3. Հաստատություն՝** | «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջ |
| **4. Թողարկող ամբիոն՝** | Դեղագիտական առարկաների |
| **5. Ուսուցման լեզու՝** | Հայերեն |
| **6. Ուսուցման ձև՝** | Առկա |
| **7. Կրթական ծրագրի իրականացման նորմատիվային ժամկետները՝** | 1) կրթության առկա ձևով.<br>*ա. միջնակարգ կրթության հիմքով՝ 2 տարի (4 կիսամյակ),*<br>*բ. հիմնական կրթության հիմքով՝ 3 տարի (6 կիսամյակ),* |
| **8. Արտոնագրում՝** | ***ՀՀ ԿԳՆ-ի կողմից*** |
| **9. ԿԾ-ի մուտքի պայմաններ** | **«Դեղագործություն» Միջին մասնագիտական** և հիմնական կրթական ծրագրերի **Մասնագետ** որակավորման աստիճանի դիմորդը պետք է ունենա առնվազն հիմնական միջնակարգ կրթության ավարտական վկայական և գիտելիքներ ***«Հայոց լեզու» և «Կենսաբանություն»*** առարկաներից: Յուրաքանչյուր դիմորդ պետք է մասնակցի Քոլեջում կազմակերպվող ընդունելության քննություններին և բավարարի **«Դեղագործություն»** մասնագիտության համար սահմանված նվազագույն պահանջները: |
| **10. Ծրագրի կառուցվածքը և նկարագիրը** | ՄՄ կրթության **0916.01.5 «Դեղագործություն»** մասնագիտության **0916.01.01.5 «Դեղագործ»** որակավորման հիմնական կրթական ծրագրի բովանդակության պարտադիր նվազագույնի նկատմամբ պահանջները սահմանվում են՝ ընդհանուր հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և ընդհանուր բնագիտական գիտելիքների, առանցքային հմտությունների, ընդհանուր և հատուկ մասնագիտական կարողությունների բնագավառում շրջանավարտին ներկայացվող պահանջների համաձայն: |
| **0916.01.5 «Դեղագործություն»**<br>ՄԿԾ մոդուլներ | **1. Ընդհանուր հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և ընդհանուր բնագիտական**<br>**2. Առանցքային հմտություններ**<br>**3. Ընդհանուր մասնագիտական**<br>**4. Հատուկ մասնագիտական**<br>**5. Նախասիրական առարկաներ**<br>**6. Պրակտիկաներ:** |

**11. Մասնագիտական գործունեության բնութագիրը.**

1. ***Միջին մասնագիտական կրթության 0916.01.5 «Դեղագործություն» մասնագիտությամբ 0916.01.01.5 «Դեղագործ» որակավորմամբ մասնագետն իրականացնում է հետևյալ զբաղմունքները՝***
   1) դեղագործ՝ մանրածախ դեղագործական կազմակերպությունում,
   2) դեղագործ՝ մեծածախ դեղագործական կազմակերպությունում,
   3) դեղագործ՝ դեղեր արտադրող կազմակերպությունում:
2. ***Միջին մասնագիտական կրթության 0916.01.5 «Դեղագործություն» մասնագիտությամբ 0916.01.01.5 «Դեղագործ» որակավորմամբ մասնագետի մասնագիտական պարտականություններն են.***
   1) որոշի դեղերի, բժշկական նշանակության առարկաների և հարդեղագործական ապրանքների պահանջարկը,
   2) ձևակերպի դեղատան տեսականու ապրանքատեսակների պահանջագրերը՝ մատակարարներին,
   3) մատակարարներից ընդունի դեղերը, բժշկական նշանակության առարկաները, հարդեղագործական ապրանքները և ստուգի դրանց փաթեթավորման ամբողջականությունը,
   4) պահպանի դեղերը, բժշկական նշանակության առարկաները և հարդեղագործական ապրանքները,
   5) օգտվի պաշտոնական տեղեկատու աղբյուրներից, դեղի ներդիր-թերթիկից,
   6) տարբերակի մարդու օրգանիզմի վրա դեղերի տարբեր դեղաբանական խմբերի ազդեցությունները,
   7) դասավորի դեղերը ըստ դեղաբանական խմբերի, պահպանման և մերչենդայզինգի կանոնների,
   8) սպառողներին տրամադրի տեղեկատվախորհրդատվական ծառայություն՝ դեղերի, բժշկական նշանակության առարկաների և հարդեղագործական ապրանքների օգտագործման ձևի, պահպանման կանոնների և այլնի վերաբերյալ,
   9) կատարի բացակայող ԱԴՏ (առանց դեղատոմսի տրվող, OTC- Over the count) դեղերի հոմանիշային փոխարինում,
   10) ընդունի դեղատոմսեր, ստուգի բաղադրատարրերի համատեղելիությունը և դեղատոմսի ձևակերպման ճշտությունը,
   11) պատրաստի դեղատնային պայմաններում տարբեր դեղաձևեր (կարծր, հեղուկ, փափուկ),
   12) փաթեթավորի և ձևավորի պատրաստված դեղերը,
   13) բաց թողնի դեղատանը պատրաստված կամ գործարանային արտադրության դեղերը, բժշկական նշանակության առարկաները և հարդեղագործական ապրանքները,
   14) սպառողների հետ իրականացնի հետադարձ կապ, գրանցի և հաղորդի տեղեկություն՝ դեղերի կողմնակի ազդեցությունների վերաբերյալ,
   15) ձևակերպի մուտքային և ելքային օրդերները,

16) կատարի ապրանքանյութական արժեքների հաշվառում և գույքագրում,
17) կատարի դեղատան և դրա ստորաբաժանումների գործունեության տնտեսագիտական վերլուծություն,
18) պահպանի դեղագործական էթիկայի և դեոնթոլոգիայի հիմունքները,
19) կանխարգելի մասնագիտական հիվանդությունները,
20) ցուցաբերի առաջին բուժօգնություն,
21) պահպանի սանիտարական նորմերի, անվտանգության տեխնիկայի և հակահրդեհային անվտանգության պահանջները:

**12. Միջին մասնագիտական կրթության 0916.01.5 «Դեղագործություն» Մասնագիտական կրթական ծրագրի վերջնարդյունքները:**

**Ա. ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԵՎ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ (ընդհանուր հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և ընդհանուր բնագիտական գիտելիքների բնագավառ):**

1. Իմանա ՀՀ Սահմանադրության, զբաղվածության տվյալ բնագավառը կարգավորող հիմնական նորմատիվ ակտերի, մարդու և հասարակության, քաղաքացիների միջև հարաբերությունները կարգավորող օրենքների և նորմատիվ փաստաթղթերի հիմնական դրույթները:
2. Տիրապետի հայոց լեզվին:
3. Հաղորդակցվի առնվազն երկու օտար լեզուներով:
4. Տիրապետի առողջ կենսակերպ վարելու, հիգիենայի և ֆիզիկական կուլտուրայի կանոններին:
5. Գիտելիքներ ունենա ազգային և համաշխարհային պատմության և մշակույթի վերաբերյալ:
6. Ունենա անձի և հասարակության զարգացման օրինաչափությունների, հասարակության սոցիալական կառուցվածքի, շարժումների, քաղաքականության սուբյեկտների, քաղաքական հարաբերությունների և գործընթացների վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ:
7. Ցուցաբերի կիրառական տնտեսագիտության հիմնադրույթների, մասնագիտական գործունեության բնագավառի տնտեսական երևույթների և հարաբերությունների առանձնահատկությունների, մակրոտնտեսության և միկրոտնտեսության օրենքների, անցումային շրջանի տնտեսության առանձնահատկությունների իմացություն:
8. Իմանա էկոլոգիական հիմնական հասկացությունների բովանդակությունը, բնապահպանական գլոբալ և տարածաշրջանային հիմնախնդիրների դրույթները:
9. Պատկերացում ունենա ԱԻՎ մասին, տիրապետի արտակարգ իրավիճակներում գործելու հիմնական սկզբունքներին և մոտեցումներին, տեղյակ լինի փրկարարական աշխատանքների կազմակերպման կառուցվածքին և ձևերին, օգտագործի անհատական պաշտպանության միջոցներ:

10. Անձնական շփման ունակությունների, միջանձնային հաղորդակցության հնարավորությունների ակտիվացման, աշխատանքային և մասնագիտական գործունեության ընթացքում նպատակային հաղորդակցման, գործնական կապերի ու հարաբերությունների ստեղծման կարողությունի ձևավորումը:
11. Աշխատանքային գործունեության ընթացքում և կենցաղում անվտանգության կանոնների պահպանման, սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան կենցաղը և աշխատանքը կազմակերպելու, հավանական վտանգները և վթարները կանխարգելելու, արտադրական վթարների դեպքում՝ անվտանգության միջոցառումներ իրականացնելու և առաջին օգնություն ցուցաբերելու կարողությունների ձևավորում:
12. Աշխատանք փնտրելու և գտնելու, աշխատանքային գործունեության ընդհանուր, ընթացիկ հաջողության հասնելու նախապայմանների ստեղծման, ինչպես նաև ցանկացած բնագավառում անհրաժեշտ աշխատանքային կուլտուրա և էթիկա դրսևորելու, ղեկավարի և գործընկերների հետ արդյունավետ հարաբերվելու, առաջացած աշխատանքային խնդիրներն ընկալելու և համապատասխան լուծումներ տալու գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորում:
13. Մասնագիտական գործունեությունը պլանավորելու, իրականացնելու, ցուցադրելու և գնահատելու գործընթացում, տվյալներ հավաքելու, մշակելու և մեկնաբանելու նպատակով ՏՀՏ-ները կիրառելու գիտելիքներ և հմտություններ:

## Բ. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

1. Ունենա մասնագիտական գործունեության տվյալ բնագավառում իր մասնագիտական դերին անհրաժեշտ կարողությունները ձևավորելու համար պահանջվող տեսական ու գործնական գիտելիքներ:
2. Դրսևորի աշխատանքային և մասնագիտական պարտականությունները կատարելու ընթացքում գործընկերների և ղեկավարների հետ հաղորդակցվելու, մասնագիտական և ընդհանուր բնույթի հարցեր ներկայացնելու, դրանք պարզաբանելու կարողություն:
3. Ունենա որոշակի փոփոխվող իրավիճակներում առաջացած խնդիրներին մասնագիտական տիպային և այլընտրանքային լուծումներ առաջարկելու կարողություն:
4. Դրսևորի մասնագիտական խնդիրների լուծման համար անհրաժեշտ փաստերը և տեղեկատվությունը համադրելու և ամբողջության մեջ դիտարկելու, ինչպես նաև քաղաքացիական գիտակցություն ցուցաբերելու կարողություն:
5. Ունենա մասնագիտական գործունեության գործառույթները սահմանված նորմերին համապատասխան իրականացնելու հմտություններ, իր և աշխատակիցների (առկայության դեպքում) մասնագիտական կարիքները գնահատելու և դրանց կարգավորման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու կարողություն:
6. Ունենա մասնագիտական կարողությունների պարբերաբար կատարելագործման ձգտում և ինքնուսուցման կարողություն:

7. Ցուցաբերի մասնագիտական և ընդհանուր բնույթի անհրաժեշտ տեղեկատվություն փնտրելու, դրանցից օգտվելու և դրանք նպատակային օգտագործելու կամ փոխանցելու կարողություն:
8. Ունենա աշխատակիցների (առկայության դեպքում) աշխատանքները կազմակերպելու կամ գործընկերային հարաբերությունները (լիազորության դեպքում) ըստ կարողությունների և մասնագիտացման համակարգելու հմտություններ:
9. Ընթացիկ մասնագիտական խնդիրների լուծման ժամանակ ցուցաբերի ռազմավարական մոտեցումների տարրեր կիրառելու կարողություն:

## Գ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Միջին մասնագիտական կրթության 0916.01.5 «Դեղագործություն» մասնագիտության 0916.01.01.5 «Դեղագործ» որակավորման հիմնական կրթական ծրագրով շրջանավարտը պետք է տիրապետի **Միջին մասնագիտական կրթության 0916.01.5 «Դեղագործություն» մասնագիտության 0916.01.01.5 «Դեղագործ» որակավորման պետական Կրթական չափորոշիչի** ***հավելված 1-ի աղյուսակ 2-ում*** բերված մոդուլներով ըստ մասնագիտացումների սահմանված ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնագիտական կարողություններին:

1. Սովորողի մոտ ձևավորել լատիներեն լեզվի մասնագիտական տերմիններ կարդալու, հասկանալու, գրելու, թարգմանելու կարողություններ:
2. Սովորողի մոտ քիմիական ռեակցիաների միջոցով ձևավորել անօրգանական ծագման նյութերի քիմիական հատկությունները որոշելու, բարդ միացությունների բանաձևեր (ֆորմուլաներ) կազմելու և դրանք անվանակարգելու կարողություններ:
3. Օրգանական միացությունների դասակարգման, քիմիական ռեակցիաների միջոցով օրգանական ծագման նյութերի քիմիական հատկությունների որոշման, օրգանական նյութերը՝ ըստ իրենց ֆիզիկաքիմիական հատկությունների ճանաչման գիտելիքների և կարողությունների ձևավորում:
4. Համապատասխան եղանակների կիրառմամբ քիմիական նյութերի որակական և քանակական վերլուծություն (անալիզ) իրականացնելու հմտությունների ձևավորում:
5. Բջիջների, հյուսվածքների, հիմնական օրգան-համակարգերի գործունեության, անատոմիական կառուցվածքի և մարդու օրգանիզմի կենսագործունեության վերաբերյալ ճանաչման, տարբերակման գիտելիքների և կարողությունների ձևավորում:
6. Բջիջների, հյուսվածքների, բույսերի տարբեր օրգանների անատոմիական, մորֆոլոգիական և ֆիզիոլոգիական առանձնահատկությունների վերաբերյալ գիտելիքների, ինչպես նաև մանրադիտակով աշխատելու, ֆիտոցենոզներում բույսերի տեսակները որոշելու, ձևաբանական նկարագիր կազմելու կարողությունների ձևավորում:
7. Դեղերի դեղաբանական խմբերի, դրանց ազդեցության, ներմուծման ուղիների, հոմանիշային փոխարինման վերաբերյալ գիտելիքների, ինչպես նաև դեղատոմսի

դուրս գրման կանոններին տիրապետելու և պաշտոնական տեղեկատու աղբյուրներից, դեղի ներդիր-թերթիկից օգտվելու կարողությունների ձևավորում:

8. Միկրոօրգանիզմների դասակարգման, մարդու կյանքում դրանց դերի, վարակների տարածման կանխարգելման վերաբերյալ գիտելիքների և կարողությունների ձևավորում:
9. Սննդի հիգիենայի, արտաքին միջավայրի և դեղագործական կազմակերպության միկրոկլիմայի կողմից մարդու առողջության և կենսագործունեության վրա ազդող գործոնների վերաբերյալ գիտելիքների, ինչպես նաև մասնագիտական հիվանդությունների կանխարգելման կարողություններ ձևավորում:
10. Հիմնավորված բիզնես-գաղափարի ձևավորման գործընթացի, կազմակերպության ստեղծման, գրանցման կարգի, կառավարման, շուկայի հետազոտման, գնահատման գործողությունների և արդյունավետության ներյացմա կարողութուն:
11. Կազմակերպության ռեսուրսների օգտագործման արդյունավետության գնահատման, ծախսերի հաշվարկի կատարման, ապրանքի/ծառայության/ գնագոյացման, բիզնես պլանի և գործողությունների ծրագրի մշակման, հարկերի, տուրքերի հաշվարների, ֆինանսական հաշվետվությունների կազման կարողություն:
12. Դեղերի քիմիական դասակարգման, ստանդարտավորման, դեղերի որակական և քանակական անալիզի իրականացման վերաբերյալ գիտելիքների և կարողությունների ձևավորում:
13. Բնական ծագում ունեցող դեղերի ստացման աղբյուրների, դեղաբուսական հումքի քիմիական կազմի, ազդեցության, ինչպես նաև դեղաբուսական հումքի տարբերակման, մթերման վերաբերյալ գիտելիքների և կարողությունների ձևավորում:
14. Դեղատնային պայմաններում տարբեր դեղաձևերի (կարծր, հեղուկ, փափուկ) բնութագրման, դասակարգման, պատրաստման վերաբերյալ գիտելիքների և կարողությունների ձևավորում:
15. Գործարանային պայմաններում պատրաստվող տարբեր դեղաձևերի (կարծր, հեղուկ, փափուկ) բնութագրման, դասակարգման, պատրաստման եղանակների վերաբերյալ գիտելիքների և կարողությունների ձևավորում:
16. Դեղագործական կազմակերպությունների գործունեության կազմակերպման կարգի, դեղորայքի՝ որպես առանձնահատուկ ապրանքի, ինչպես նաև այլ դեղագործական ապրանքատեսակների ընդունման, բաց թողնման և այլ գործընթացների վերաբերյալ գիտելիքների և կարողությունների ձևավորում:
17. Դեղագործական մարկետինգում և մենեջմենթում կիրառվող հիմնական հասկացությունների վերաբերյալ գիտելիքների, ինչպես նաև արհեստավարժ վաճառքի հմտությունների ձևավորում:
18. Բժշկական ապրանքների և գործիքների դասակարգման, բժշկական և դեղագործական արտադրանքի նյութագիտության, մարկետինգային հասկացությունների վերաբերյալ գիտելիքների և դրանք դասավորելու (մերչենդայզինգի) կարողությունների ձևավորում:

19. Մարդու օրգանիզմի վրա դեղերի տարբեր դեղաբանական խմբերի ազդեցության վերաբերյալ ճանաչման և տարբերակման կարողությունների ձևավորում:

**13. Հիմնական կրթական ծրագրի իրականացման պայմանների նկատմամբ պահանջներ**

***13.1. Միջին մասնագիտական կրթության 0916.01.5 «Դեղագործություն» մասնագիտության 0916.01.01.5 «Դեղագործ» որակավորման հիմնական կրթական ծրագիր իրականացնող հաստատության կադրային ապահովության և կադրային համապատասխանության նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.***

1) ուսումնական պարապմունքներ վարող դասախոսը պետք է ունենա դասընթացի բնույթին համապատասխանող միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթության որակավորում, կամ տվյալ մասնագիտական զբաղվածության բնագավառում աշխատանքային գործունեության փորձ՝ եթե տվյալ դասընթացի ուղղությամբ միջին կամ բարձրագույն կրթություն Հայաստանի Հանրապետությունում չի իրականացվում: Հատուկ մասնագիտական դասընթացները վարող դասախոսների համար մասնագիտական աշխատանքի փորձի առկայությունը ցանկալի է,
2) ուսումնական պրակտիկան վարող արտադրական ուսուցման վարպետը պետք է ունենա տվյալ մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքի փորձ և մասնագիտական կրթություն:
3) արտադրական և նախաավարտական պրակտիկաները վարում է մասնագիտական դասընթացի դասախոսը:

***13.2. Միջին մասնագիտական կրթության 0916.01.5 «Դեղագործություն» մասնագիտության 0916.01.01.5 «Դեղագործ» որակավորման հիմնական կրթական ծրագիր իրականացնող հաստատության ուսումնամեթոդական ապահովության նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.***

1) հաստատությունը պետք է ունենա մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված առարկաների և մոդուլների ծրագրային բովանդակությանը համապատասխանող ուսումնական, մեթոդական և տեղեկատվական նյութեր (գրադարանային ֆոնդ, տվյալների համակարգչային բազա և այլն), գնահատման և ատեստավորման նպատակով օգտագործվող նյութեր, ուսումնական գործընթացի արդյունավետ իրականացմանը նպաստող այլ նյութեր, ուղեցույցներ:

***13.3. Միջին մասնագիտական կրթության 0916.01.5 «Դեղագործություն» մասնագիտության 0916.01.01.5 «Դեղագործ» որակավորման հիմնական կրթական ծրագիր իրականացնող հաստատության նյութատեխնիկական ապահովության նկատմամբ պահանջները սահմանվում են ըստ ուսումնական կաբինետների, լաբորատորիաների, արհեստանոցների, սպորտային համալիրի: Դրանց հագեցվածությունը որոշվում է ուսումնական ծրագրերի պահանջներին համապատասխան:***

1) ՈՒսումնական կաբինետների երաշխավորվող ցանկը՝

ա. հայոց լեզվի և խոսքի մշակույթի,

բ. հասարակագիտական առարկաների,

գ. օտար լեզվի,

դ. համակարգչային,

ե. մարդու ֆիզիոլոգիայի,

զ. դեղաբանության,

է. հիգիենայի,

ը. դեղագործության կազմակերպման, կառավարման և ապրանքագիտության:

2) Ուսումնական լաբորատորիաների երաշխավորվող ցանկը՝

ա. մանրէաբանության,

բ. անօրգանական, օրգանական, անալիտիկ քիմիայի,

գ. դեղագործական քիմիայի,

դ. բուսաբանության և ֆարմակագնոզիայի,

ե. դեղերի դեղատնային և գործարանային տեխնոլոգիայի,

թ. դեղաձևերի պատրաստման տեխնոլոգիայի:

3) Սպորտային համալիր՝

ա. մարզադահլիճ,

բ. մարզահրապարակ:

Կրթական ծրագիր իրականացնող հաստատությունը, ելնելով անհրաժեշտությունից, կարող է ձևավորել լրացուցիչ կաբինետներ, լաբորատորիաներ, արհեստանոցներ:

***13.4. Միջին մասնագիտական կրթության 0916.01.5 «Դեղագործություն» մասնագիտության 0916.01.01.5 «Դեղագործ» որակավորման հիմնական կրթական ծրագրով ուսումնական գործընթացի կազմակերպման նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.***

1) առկա ուսուցման ձևի համար ուսումնական տարվա սկիզբը սեպտեմբերի 1-ն է, իսկ հեռակա ձևի համար սահմանվում է ուսումնական պլաններով,
2) ուսումնական յուրաքանչյուր տարվա տևողությունը սահմանվում է ուսումնական պլանով,
3) ուսանողի շաբաթական ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը չպետք է գերազանցի 54 ժամը՝ ներառյալ լսարանային և արտալսարանային ուսումնական աշխատանքի բոլոր տեսակները,
4) ուսանողի ուսումնական բեռնվածության նվազագույն և պարտադիր պարապմունքների շաբաթական ծավալը չպետք է գերազանցի 36 ժամը՝ առանց նախասիրական առարկաների, խորհրդատվությունների և լրացուցիչ արտալսարա-նային պարապմունքների բեռնվածության,
5) հեռակա ուսուցման ձևի դեպքում ուսանողների հետ պարտադիր պարապմունքների տարեկան ծավալը առնվազն 160 ժամ է,
6) ուսումնական խմբի համար խորհրդատվության տարեկան ծավալը կազմում է մինչև 100 ժամը,

7) նախասիրական առարկաների ցանկը, դրանց ծավալը (առանձին դասացուցակով) և ուսուցման ժամկետները յուրաքանչյուր ուսումնական տարում որոշվում է հաշվի առնելով ուսանողների ընտրությունը:

***13.5. Միջին մասնագիտական կրթության 0916.01.5 «Դեղագործություն» մասնագիտության 0916.01.01.5 «Դեղագործ» որակավորման հիմնական կրթական ծրագրի պրակտիկաների կազմակերպման նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.***

1) մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը ներառում է ուսումնական (տեսական ուսուցմամբ և/կամ առանց տեսական ուսուցման), արտադրական և նախաավարտական պրակտիկաներ,
2) պրակտիկայի յուրաքանչյուր տեսակի տևողությունը սույն չափորոշչով սահմանված պրակտիկայի ընդհանուր տևողությանը համապատասխան սահմանվում է մասնագիտության ուսումնական պլանով,
3) պրակտիկաների ուսումնական ծրագրերը կազմում և հաստատում է ուսումնական հաստատությունը,
4) ուսումնական պրակտիկաներն անցկացվում են պրակտիկայի ծրագրի կատարումն ապահովելու համար բավարար կահավորում և տեխնիկական հագեցում ունեցող ուսումնական արհեստանոցներում, ուսումնափորձնական տեղամասերում, ուսումնական հաստատության այլ ուսումնաօժանդակ օբյեկտներում, ինչպես նաև կազմակերպություններում, հաստատություններում,
5) արտադրական և նախաավարտական պրակտիկաները, որպես կանոն, անց են կացվում պրակտիկաների ուսումնական ծրագրերի բովանդակությանը համապատասխան պայմաններ ունեցող կազմակերպություններում:

***13.6. Միջին մասնագիտական կրթության 0916.01.5 «Դեղագործություն» մասնագիտության 0916.01.01.5 «Դեղագործ» որակավորման ուսանողների ատեստավորումների նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.***

1) ուսումնառության ընթացքում բոլոր ուսանողները պարբերաբար ատեստավորվում են, որի նպատակը ըստ սույն չափորոշչով սահմանված կարողությունների տարրերի նրանց ձեռքբերումները հավաստող վկայություններ ստանալն է,
2) ուսումնական կիսամյակի սկզբում ուսանողը տեղեկացվում է կիսամյակի ընթացքում միջանկյալ ատեստավորման բնույթի, ժամկետների, անցկացման ձևի և ներառվող նյութի ծավալի մասին,
3) պետական ամփոփիչ ատեստավորումը երաշխավորվում է անց կացնել առանձին առարկաներից կամ մոդուլներից քննության, համալիր (միջառարկայական կամ միջմոդուլային) քննության կամ ավարտական (դիպլոմային) աշխատանք կատարելու և պաշտպանելու ձևով,
4) պետական ամփոփիչ ատեստավորման ընտրված ձևը և ներառվող նյութի ծավալը պետք է հնարավորություն տա ստուգել շրջանավարտի մասնագիտական կարողությունների և հմտությունների համապատասխանությունը սույն չափորոշչով

0916.01.5 «Դեղագործություն» մասնագիտության 0916.01.01.5 «Դեղագործ» որակավորման մասնագետի համար սահմանված պահանջներին:

*ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ*

*ՏՆՕՐԵՆ______________ Ի.Վարդանյան*

*«______»_______ 2021թ.*

**«ԳՐԻԳՈՐԻՍ» ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋ**

Ուսումնական հաստատության անվանումը

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ

## 0916.01.01.5 «ԴԵՂԱԳՈՐԾ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ՝ 0916.01.5 «ԴԵՂԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ»

**ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ՝** միջին մասնագիտական
**ՄԱՍՆԱԳԵՏԻ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄԸ՝** դեղագործ
**ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԸ՝** միջնակարգ
**ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝** 2 տարի
**ԿՐԹՈՒԹՅԱՆ ՁԵՎԸ՝** առկա

## I. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

| Կուրսը | սեպտեմբեր | | | | | հոկտեմ | | | | նոյեմբեր | | | | դեկտեմբեր | | | | | հունվ. | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 1–7 | 8–14 | 15–21 | 22–28 | 29.09–5.10 | 6–12 | 13–19 | 20–26 | 27.10–2.11 | 3–9 | 10–16 | 17–23 | 24–30 | 1–7 | 8–14 | 15–21 | 22–28 | 29.12–4.01 | 5–11 | 12–18 | 19–25 | 26.01–1.02 |
| 1 | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 2 | | | | | | | | | | | | | | | | | | : / = | : / = | = | = | |
| 3 | | | | | | | | | | | ◊ | ◊ | ◊ | ◊ | ◊ | ◊ | ◊ | : / = | : / = | = | = | |
| Ընդամենը | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |

| Կուրսը | փետրվ | | | | մարտ | | | | | ապրիլ | | | | մայիս | | | | հունիս | | | | | հուլիս | | | | օգոստոս | | | | II. Ժամանակի բյուջեն /շաբաթներով/ | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 2–8 | 9–15 | 16–22 | 23.02–1.03 | 2–8 | 9–15 | 16–22 | 23–29 | 30.03–5.04 | 6–12 | 13–19 | 20–26 | 27.04–3.05 | 4–10 | 11–17 | 18–24 | 25–31 | 1–7 | 8–14 | 15–21 | 22–28 | 29.06–5.07 | 6–12 | 13–19 | 20–26 | 27.07–2.08 | 3–9 | 0–16 | 17–23 | 24–31 | Տեսական ուսուցում | Մոդուլների ամփոփում | Պրակտիկա | Ամփոփիչ պետական ատեստավ. նախապատ. | Ամփոփիչ պետական ատեստավորում | Արձակուրդ Ամառը | ընդամենը |
| 1 | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 2 | | | | | | | | | | | | | | | | | | ◊ | ◊ | ◊ | : | = | = | = | = | = | = | = | = | = | 35 | 2 | 3 | | | 12 | 52 |
| 3 | | | | | | | | | ◊ | ◊ | ◊ | ◊ | : | X | X | X | X | X | X | ☰ | ☰ | = | = | = | = | = | = | = | = | = | 19 | 2 | 17 | | 2 | 12 | 52 |
| Ընդամենը | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | 54 | 4 | 20 | | 2 | 24 | 104 |

| Նշան | Բացատրություն |
|---|---|
| (դատարկ) | Տեսական ուսուցում |
| 0 | Ուսումնական պրակտիկա տեսական ուսուցմամբ |
| ◊ | Ուսումնական պրակտիկա առանց տեսական ուսուցման |
| x | Նախաավարտական, արտադրական պրակտիկա |
| : : | Մոդուլների ամփոփում |
| ⮝ | Նախապատրաստում ամփոփիչ պետական ատեստավորման |
| III | Ամփոփիչ պետական ատեստավորում |
| = | Արձակուրդ, ամանոր և սուրբ ծնունդ |

# III. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՊԼԱՆԸ

| N | Առարկաների անվանումը և մոդուլները | Ատեստավորում ըստ կիսամյակների | | | Ուսանողի ուսումնական բեռնվածությունը(ժամ) | | | | Բաշխումն ըստ կուրսերի և կիսամյակների | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Պարտադիր լսարանային բեռնվածություն | | | | 1-ին կուրս | | 2-րդ կուրս | | 3-րդ կուրս | |
| | | | | | | Այդ թվում | | | | | | | | |
| | | Քնն. | Ստուգարք | Կուրս աշխ. | Ընդամենը | Տես. ուսուց. | Լաբոր. և գործն. աշխ | Սեմինար պարապմունք | 1-ին կիս. շաբ | 2-րդ կիս. շաբ. | 3-րդ կիս. 17 շաբ. | 4-րդ կիս. 18 շաբ. | 5-րդ կիս. 10 շաբ. | 6-րդ կիս 9 շաբ |
| **1.** | **ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ, ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ** | | | | | | | | | | | | | |
| 1. | Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ | | 4տ | | 72 | 54 | 18 | | | | 36 | 36 | | |
| 2. | Տնտեսագիտության հիմունքներ | | 4տ | | 54 | 44 | 10 | | | | | 54 | | |
| 3. | Քաղաքագիտության և սոցիոլոգիայի հիմունքներ | | 5տ | | 54 | 44 | | 10 | | | | | 54 | |
| 4. | Իրավունքի հիմունքներ | | 3տ | | 36 | 30 | 6 | | | | 36 | | | |
| 5. | Պատմություն | | 3տ | | 54 | 44 | | 10 | | | 54 | | | |
| 6. | Ռուսաց լեզու | | 4տ | | 72 | 52 | 20 | | | | 36 | 36 | | |
| 7. | Օտար լեզու | | 4տ | | 72 | 52 | 20 | | | | 36 | 36 | | |
| 8. | Ֆիզկուլտուրա | | 3-6տ | | 108 | 100 | 8 | | | | 34 | 36 | 20 | 18 |
| 9. | Լանդշաֆտագիտության և էկոլոգիայի հիմունքներ | | 4տ | | 36 | 30 | 6 | | | | 36 | | | |
| 10. | Քաղաքացիական պաշտպանության և ԱԻՎ հիմնահարցեր | | 4տ | | 28 | 26 | 2 | | | | | 28 | | |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | | **586** | **476** | **90** | **20** | | | **268** | **226** | **74** | **18** |
| **2.** | **ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | | | | | | | | | | | | |
| 1. | Հաղորդակցություն | | 3տ | | 36 | 10 | 26 | | | | 36 | | | |
| 2. | Անվտանգություն և առաջին օգնություն | | 3տ | | 36 | 12 | 24 | | | | 36 | | | |
| 3. | Աշխատանքային գործունեության ընդհանուր հմտություններ | | 3տ | | 36 | 8 | 28 | | | | 36 | | | |
| 4. | Համակարգչային օպերատորություն | | 3տ | | 36 | 4 | 32 | | | | 36 | | | |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | | **144** | **34** | **110** | | | | **144** | | | |
| **3.** | **ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ** | | | | | | | | | | | | | |
| 1. | Լատիներեն լեզվի հիմունքներ՝ բժշկական և դեղագործական տերմինաբանությամբ | | 3տ | | 72 | 36 | 36 | | | | 72 | | | |
| 2. | Անօրգանական քիմիայի հիմունքներ | | 3տ | | 36 | 16 | 20 | | | | 36 | | | |
| 3. | Օրգանական քիմիայի հիմունքներ | | 4տ | | 36 | 12 | 24 | | | | | 36 | | |
| 4. | Անալիտիկ քիմիա | | 4տ | | 24 | 10 | 14 | | | | | 24 | | |
| 5. | Ֆիզիոլոգիա անատոմիայի հիմունքներով | | 4տ | | 72 | 32 | 40 | | | | 36 | 36 | | |
| 6. | Բուսաբանության հիմունքներ | | 3տ | | 54 | 22 | 32 | | | | 54 | | | |
| 7. | Ընդհանուր դեղաբանություն | | 6տ | | 54 | 20 | 34 | | | | | | | 54 |
| 8. | Մանրէաբանության հիմունքներ | | 4տ | | 36 | 12 | 24 | | | | | 36 | | |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 9. | Ընդհանուր հիգիենա և էկոլոգիա | | 4տ | | 36 | 16 | 20 | | | | | 36 | | |
| 10. | Ձեռներեցություն | | 4տ | | 72 | 22 | 50 | | | | | 72 | | |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | | **492** | **198** | **294** | | | | **198** | **240** | **0** | **54** |
| **4.** | **ՀԱՏՈՒԿ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ** | | | | | | | | | | | | | |
| 1. | Դեղագործական քիմիա | | 4տ | 90 | 20 | 70 | | | | | | 90 | | |
| 2. | Ֆարմակոգնոզիա | | 4տ | 90 | 24 | 66 | | | | | | 90 | | |
| 3. | Դեղերի դեղատնային տեխնոլոգիա | | 5տ | 54 | 18 | 36 | | | | | | | 54 | |
| 4. | Դեղերի գործարանային տեխնոլոգիա | | 5տ | 72 | 26 | 46 | | | | | | | 72 | |
| 5. | Դեղագործության կազմակերպում և էկոնոմիկա | | 5տ | 90 | 36 | 54 | | | | | | | 90 | |
| 6. | Դեղագործական մարկետինգի և մենեջմենթի հիմունքներ | | 6տ | 90 | 36 | 54 | | | | | | | | 90 |
| 7. | Բժշկական և դեղագործական ապրանքագիտություն | | 6տ | 72 | 28 | 44 | | | | | | | | 72 |
| 8. | Մասնավոր դեղաբանություն | | 6տ | 108 | 52 | 56 | | | | | | | 54 | 54 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | **666** | **240** | **426** | | | | | | **180** | **270** | **216** |
| **5.** | **ԸՆՏՐՈՎԻ** | | | **36** | | | | | | | | | | |
| | **ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ԺԱՄԵՐ** | | | **20** | | | | | | | **2** | **2** | **16** | |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | **1944** | **948** | **920** | **20** | | | | **612** | **648** | **360** | **324** |
| | **ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | | **200** | | | | | | | | | | |
| | Շաբաթվա ժամերի քանակը | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | **36** | **36** | **36** | **36** | **36** | **36** |

| **IV. ՆԱԽԱՍԻՐԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ** | | | |
|---|---|---|---|
| 1. | Ընտանեկան կյանքի նախապատրաստում | | |
| 2. | Տարիքային հոգեբանություն | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |

| **N** | **VII. ԱՆՀՐԱԺԵՇՏ ԿԱԲԻՆԵՏՆԵՐԻ, ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻ ԵՎ ԱՐՀԵՍՏԱՆՈՑՆԵՐԻ ՑԱՆԿԸ ԿԱԲԻՆԵՏՆԵՐ** |
|---|---|
| 1. | հայոց լեզվի և խոսքի մշակույթի |
| 2. | հասարակագիտական առարկաների |
| 3. | օտար լեզվի |
| 4. | Համակարգչային |
| 5. | մարդու ֆիզիոլոգիայի |
| 6. | Դեղաբանության |
| 7. | Հիգիենայի |
| 8. | Դեղագործության կազմակերպման, կառավարման և ապրանքագիտության |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | **V. ՊՐԱԿՏԻԿԱ** | Կիսամյակ | Շաբաթ | 9. | |
| 1. | Ուսումնական պրակտիկա առանց տեսական ուսուցման | **IV,V,VI** | **14** | 10. | |
| | Նախաավարտական, արտադրական պրակտիկա | **VI** | **6** | 11. | |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | | **20** | | **ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐ** |
| **VI. ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ**<br>Հունիսի 15-հունիսի 28-ը շրջանում երկու համալիր պետական քննություն ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնագիտական խմբերի մոդուլներից | | | | 1. | մանրէաբանության |
| | | | | 2. | անօրգանական, օրգանական, անալիտիկ քիմիայի |
| | | | | 3. | դեղագործական քիմիայի |
| | | | | 4. | բուսաբանության և ֆարմակագնոզիայի |
| | | | | 5. | դեղերի դեղատնային և գործարանային տեխնոլոգիայի |
| | | | | 6. | դեղաձևերի պատրաստման տեխնոլոգիայի |
| | | | | | **ԱՐՀԵՍՏԱՆՈՑՆԵՐ** |
| | | | | 1. | |
| | | | | 2. | |
| | | | | | **ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ** |
| | | | | 1. | **Մարզադահլիճ** |
| | | | | 2. | **Մարզահրապարակ** |

## VIII. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

1. Ուսանողների գիտելիքների յուրացման մակարդակը ստուգելու, ինչպես նաև ուսումնառության արդյունավետությունը վերահսկելու նպատակով, հաստատության ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ կարող են անցկացվել առանձին առարկաների /մոդուլների/ ընթացիկ /միջանկյալ/ քննություններ, ստուգարքներ, ստուգողական աշխատանքներ: Ստուգարքներն, այդ թվում՝ տարբերակված, անցկացվում են առարկայի /մոդուլի/ համար սահմանված ժամերի հաշվին: Ըստ առարկաների /մոդուլների/՝ ստուգողական աշխատանքների թիվը հաստատում է ուսումնամեթոդական խորհուրդը: Քննությունների և ստուգարքների անցկացման կարգը սահմանում է ՀՀ կրթության և գիտության նախարարությունը:
2. Լաբորատոր աշխատանքների, օտար լեզուների, համակարգչային, գործնական, սեմինար, ֆիզիկական կուլտուրայի, ինչպես նաև ուսումնամեթոդական խորհրդի կողմից երաշխավորած առանձին առարկաների /մոդուլների/ գծով ուսումնական պարապմունքների, կուրսային նախագծման և արհեստանոցներում արտադրական ուսուցման ժամանակ ուսումնական խումբը բյուջետային ֆինանսավորման դեպքում կարող է բաժանվել ենթախմբերի՝ յուրաքանչյուրում առնվազն 8 ուսանող՝ ելնելով ուսուցանվող առարկայի /մոդուլի/ յուրահատկությունից: Համապատասխան միջոցների առկայության պայմաններում ուսումնական պարապմունքները կարող են անցկացվել առանձին ուսանողների հետ /անհատական պարապմունքներ, ուսուցման անհատական ստեղծագործական ձևեր և այլն/: Ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ առանձին առարկաների /մոդուլների/ տեսական դասընթացը կարող է կազմակերպվել

հոսքային պարապմունքի ձևով: ՈՒսումնամեթոդական խորհրդի որոշումներն ու երաշխավորությունները ուսումնական տարվա սկզբում քննարկում է քոլեջի խորհուրդը, հաստատում՝ տնօրենը:

3. Նախասիրական առարկաները, դրանց ծավալը և ուսուցման ժամկետը, բայց ոչ ավելի, քան շաբաթը 4 ժամ, որոշում է քոլեջը: Ամբիոնների, առարկայական /ցիկլային/ հանձնաժողովների կողմից ներկայացված նախասիրական առարկաների ծրագիրը հաստատում է քոլեջի ուսումնամեթոդական խորհուրդը:
4. Ֆիզիկական կուլտուրայի առարկայական ծրագրով նախատեսված նյութը կարող է իրացվել նաև արտաուսումնական պարապմունքների տարբեր ձևերով՝ մարզական ակումբներում, սեկցիաներում, խմբակներում:
5. ՈՒսումնական գործընթացի ժամանակացույցը, ելնելով տեղական պայմաններից, կարելի է փոփոխել՝ պարտադիր պահպանելով տեսական և գործնական ուսուցման, մոդուլների ամփոփման, պրակտիկայի, արձակուրդի ընդհանուր տևողությունը: Ամանորի և Սուրբ ծննդի տոների շաբաթը քոլեջը հաշվի է առնում յուրաքանչյուր տարվա աշխատանքային ժամանակացույցը կազմելիս:
6. Ամբիոնների, առարկայական /ցիկլային/ հանձնաժողովների ներկայացրած խորհրդատվությունների անցկացման ձևը հաստատում է ուսումնամեթոդական խորհուրդը:
7. Պետական կառավարման լիազորված մարմնի կողմից հանձնարարված փաստաթղթերի ուսումնասիրումը կատարվում է համապատասխան առարկաների ժամերի հաշվին:
8. Պահուստային ժամերը տնօրինում է քոլեջը՝ ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության սահմանած կարգի պահանջներին համապատասխան:
9. ՈՒսումնական պրակտիկան կարող է անցկացվել կենտրոնացված, կամ տեսական պարապմունքների հետ հաջորդաբար՝ պահպանելով պլանով նախատեսված ժամաքանակը: Պրակտիկայի անցկացման ժամկետը կարելի է տեղաշարժել ուսումնական տարվա նույն կիսամյակի ընթացքում: Պրակտիկայի յուրաքանչյուր ձև ավարտվում է հաշվետվությամբ՝ գնահատումով:
10. Նախաավարտական պրակտիկան անց է կացվում կենտրոնացված կարգով, ուսումնական պլանով նախատեսված ժամկետներում:
11. Ուսումնական հաստատությունը, ելնելով անհրաժեշտությունից, կարող է ստեղծել լրացուցիչ կաբինետներ, մասնագիտացված լսարաններ:

**0916.01.5 «Դեղագործություն» մասնագիտության Միջին մասնագիտական կրթության կրթական ծրագրի հիմնական մոդուլների վերջնարդյունքների ձևավորման քարտեզ**

| Ուսումնական առարկայի/մոդուլի անվանումը | ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԵՎ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ | | | | | | | | | | | | | ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ | | | | | | | | | ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 |
| Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ | | + | | | | | | | | + | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Տնտեսագիտության հիմունքներ | | | | | | + | + | | | | | | | | | | | + | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Քաղաքագիտության և սոցիոլոգիայի հիմունքներ | + | | | | | + | | | | | | | | | | | + | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Իրավունքի հիմունքներ | + | | | | | + | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Պատմություն | | + | + | | + | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Ռուսաց լեզու | | | + | | | | | | | + | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Օտար լեզու | | | + | | | | | | | + | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Ֆիզկուլտուրա | | | | + | | | | | | | | | | + | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Լանդշաֆտագիտության և էկոլոգիայի հիմունքներ | | | | | | | | + | | | + | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Քաղաքացիական պաշտպանության և ԱԻՎ հիմնահարցեր | | | | | | | | | + | | + | | | + | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Հաղորդակցություն | | | | | | | | | | + | | | + | | + | | | | + | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Անվտանգություն և առաջին օգնություն | | | | | | | | | + | | + | | | | | + | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Աշխատանքային գործունեության ընդ. հմտություններ | | | | | | | | | | | + | + | | | | + | | | | | + | + | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Համակարգչային օպերատորություն | | | | + | | | | | | | | | + | | | | | | | + | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Լատիներեն լեզվի հիմունքներ՝ բժշկական և դեղագործական տերմինանաբանությամբ | | | | | | | | | | + | | | | | + | | | | | | | | + | | | | | | | | | | | | | | | | | | |
| Անօրգանական քիմիայի հիմունքներ | | | | | | | | | | | | | | + | | | | | | | | | | + | | | | | | | | | | | | | | | | | |
| Օրգանական քիմիայի հիմունքներ | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | + | | | | | | | | | | | | | | | | |
| Անալիտիկ քիմիա | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | + | | | | | | | | | | | | | | | |
| Ֆիզիոլոգիա անատոմիայի հիմունքներով | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | + | + | | | | | | | | | | | | | |
| Բուսաբանության հիմունքներ | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | + | | | | | | | | | | | | | |

## 0916.01.5 «Դեղագործություն» մասնագիտության Միջին մասնագիտական կրթության կրթական ծրագրի հիմնական մոդուլների վերջնարդյունքների ձևավորման քարտեզ

| Ուսումնական առարկայի/մոդուլի անվանումը | ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԵՎ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ | | | | | | | | | | | | | ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ | | | | | | | | | ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 |
| Ընդհանուր դեղաբանություն | | | | | | | | | | | | | | | | | + | + | | | | | | | | | | | + | | | | | | | | | | | | |
| Մանրէաբանության հիմունքներ | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | + | | + | | | | | | | | | | | |
| Ընդհանուր հիգիենա և էկոլոգիա | | | | + | | | | + | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | + | | | | | | | | | | |
| Ձեռներեցություն | | | | | | | | | | | | + | | | | | | | | | | | | | | | | | | | | + | + | | | | | | | | |
| Դեղագործական քիմիա | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | + | + | | | | | | | | | + | | | | | | | |
| Ֆարմակոգնոզիա | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | + | | | | | | | + | | | | | | |
| Դեղերի դեղատնային տեխնոլոգիա | | | | | | | | | | | + | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | + | | | | | |
| Դեղերի գործարանային տեխնոլոգիա | | | | | | | | | | | | | | + | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | + | + | | | |
| Դեղագործության կազմակերպում և էկոնոմիկա | + | | | | | | | | | | | | | | | | | | | + | + | | | | | | | | | | | | | | | | | + | | | |
| Դեղագործական մարկետինգի և մենեջմենթի հիմունքներ | + | | | | | | | | | + | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | + | | |
| Բժշկական և դեղագործական ապրանքագիտություն | | | | | | | + | | | | | | | | | | | | | + | | | | | | | | | | | | | | | | | | | | + | |
| Մասնավոր դեղաբանություն | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | + | | | | | | | | | | | | + |
| Ընտանեկան կյանքի նախապատրաստում | | | | | | + | | | | | | | | | | + | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Տարիքային հոգեբանություն | | | | | | | | | | | | | | | | | | | | | + | + | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Ուսումնական պրակտիկա առանց տեսական ուսուցման | | | | | | | | | | | | | | + | | + | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Նախաավարտական, արտադրական պրակտիկա | | | | | | | | | | | | | | + | | | + | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |

## 0916.01.5 «ԴԵՂԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՀՀ ՈԱՇ-Ի ՇՐՋԱՆԱԿՆԵՐԻ ՀԱՄԱԴՐԵԼԻՈՒԹՅՈՒՆ

| ՀՀ ՈԱՇ-ի շրջանակներ 5-րդ մակարդակ (մասնագետ) | «ԳՐԻԳՈՐԻՍ» բժշկա-հումանիտար քոլեջի վերջնարդյունքներ | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԵՎ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ | | | | | | | | | | | | | ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ | | | | | | | | | ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ | | | | | | | | | | | | | | | | | | |
| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 |
| Գիտելիք 1 | + | | | | | | | | | | | | | | | | | + | + | | | | | | | | | | | | | | | | | | | + | + | | | + |
| Գիտելիք 2 | | + | + | + | + | | | + | | | | | + | | | + | + | | | | | + | | | + | | + | | + | | | | | + | + | + | | | + | + | |
| Հմտություններ 1 | | + | + | | | | + | | + | | | + | | + | + | | + | | | + | + | + | | | | + | | | | | | | | | | | | | + | | |
| Հմտություններ 2 | | | | | | | | | | + | | | + | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Կարողունակություն 1 | | | | | | + | | | | | | | | + | + | | | | | | | | | | + | | | | | | | + | + | | | | + | + | | + | |
| Կարողունակություն 2 | | | | | | | | | | | | | | | | | | + | + | + | | | + | + | | | + | + | | | | | | + | + | + | | | | | |
| Կարողունակություն 3 | | | | | | | | | | | + | + | | | | | | | | | | | | | | | | | | | + | + | | | | | | | | | + |
| Կարողունակություն 4 | | | | | + | | | | | | | | | | | + | + | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |

| Մակարդակը | Որակավորումը | Կրթական աստիճանը /ծրագիրը/ | Բնութագրիչները | | |
|---|---|---|---|---|---|
| | | | Գիտելիքները | Հմտությունները | Կարողունակությունը (կոմպետենցիան) |
| V | **ՄԱՍՆԱԳԵՏ (ՄՄԿ դիպլոմ)** | **ՄՄԿ** Տևողությունը՝ 2-5 տարի | **1.** Հիմնարար և համակողմանի փաստական, տեսական և մասնագիտացված գիտելիքներ՝ աշխատանքի կամ ուսումնառու-թյան ոլորտից:<br>**2.** Մասնագիտության հիմնարար հասկացությունների, տեսու-թյունների և մեթոդների իմա-ցություն: | **1.** Բազմակողմանի և համապարփակ իմացական, ճանաչողական, վերլուծական և գործնական հմտություններ, որոնք անհրաժեշտ են՝<br>1) տարաբնույթ, այդ թվում՝ մասնագիտական, խնդիր համար.<br>2) առաջացած խնդիրների վերաբերյալ դատողու-թյուններ կատարելու և լուծումներ առաջադրելու համար՝ ցուցաբերելով ստեղծագործական մոտեցում:<br>**2.** Հաղորդակցման և ՏՀՏ հմտություններ, որոնք անհրաժեշտ են՝<br>1) մասնագիտությանն առնչվող տեղեկատվությունը, գաղափարները, հասկացությունները, խնդիրներն ու դրանց լուծումները բացատրելու և հանրության նեղ շրջանակներում ներկայացնելու համար.<br>2) մասնագիտական ոլորտում աշխատանքը դյուրացնելու և արագացնելու համար.<br>3) մասնագիտությանն առնչվող քանակական և որակական տվյալները հավաքագրելու, մշակելու և վերլուծելու համար: | **1.** Որոշ չափով կառավարել և վերահսկել աշխատանքային կամ ուսումնառության գործընթացներ՝ անկանխատեսելի ու փոփոխունակ միջավայրում, ստանձնել սեփական ու այլ անձանց գործողու-թյուններին հետևելու և դրանք բարելավելու պատասխանատվություն:<br>**2.** Բացահայտել սեփական կրթական պահանջմունքները և ընդունել որոշում հետագա ուսումնառության վերաբերյալ:<br>**3.** Պահպանել հասարակական համակեցու-թյան կանոնները, կենսական տարբեր իրավիճակներում դրսևորել քաղաքացիա-կան գիտակցությամբ վարքագիծ, ինչպես նաև իրականացնել որոշակի վերահսկողություն թիմում այդ կանոնների պահպանման նկատմամբ:<br>**4.** Կիրառել ազգային և համամարդկային արժեքներն առօրյա հարաբերություններում: |

## ՄՈԴՈՒԼԻ/ԱՌԱՐԿԱՅԻ ՆԿԱՐԱԳԻՐ